# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
# ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2017 Թ. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը կազմակերպում է հեռակա ուսուցման 2017 թ. ընդունելություն «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտությամբ, ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզումներ՝ ադապտիվ ֆիզիկական կուլտուրա, «Սպորտ» մասնագիտությամբ, առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ Կինեզիոլոգիա, «Լրագրություն» - մարզական լրագրություն, բակալավրի կրթական ծրագրով հետևյալ մարզաձևերից. ազատ ոճի ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ձյուդո, կարատե, ֆուլ-կոնտակտ կարատե, բռնցքամարտ, ծանրամարտ, փրկարարական գործ, լող, մարմնամարզություն, ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, շախմատ, աթլետիկա, կինեզիոլոգիա, ադապտիվ ֆիզիկական կուլտուրա, մարզական լրագրություն:

Ուսուցումը բուհում կազմակերպվում է վճարովի հիմունքներով, ուսման վարձը՝ տարեկան 340 000 դրամ է: Ուսման տևողությունը 5 տարի է:

Ինստիտուտի հեռակա բաժին կարող է ընդունվել բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և մասնագիտական տեխնիկական կրթություն (9-րդ դասարանի հիմքով) ունեցող քաղաքացիները, առանց տարիքային սահմանափակման:

ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխատող (մեկ տարուց ոչ պակաս) բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները կարող են ընդունվել նպատակային կարգով: Նրանց ուսումը պետք է երաշխավորի մարզպետարանի կամ համայնքների ղեկավարների կողմից ներկայացված ուղեգրի հիման վրա: Ավագ դպրոցներում աշխատող ուսուցիչները ուղեգիր ներկայացնում են ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից:

Մրցույթով անցած դիմորդների հետ կնքվում է եռակողմ պայմանագիր (դիմորդ-բուհ-մարզպետարան կամ համայնք)՝ ուսումնառության տարիներին երաշխավորված դպրոցում աշխատելու համար: Նպատակային կարգով ինստիտուտ ընդունված ուսանողների տարեկան ուսման վարձը կազմում է 50 հազար դրամ:

Դիմումներն ընդունվում են 2017 թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը:

Քննություններն անց են կացվում սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 20-ը:

Հեռակա ուսուցման բաժին մրցույթից դուրս դրական միավորներով անվճար ընդունվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները (ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված օրենք, թիվ Հ. 0-258, 27.10.1999 թ.) համաձայն ՀՀ պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունների կողմից տրված վկայականների:

Վճարովի համակարգում առնվազն անցումային միավոր հավաքելու դեպքում սահմանված կարգով ընդունվում են անվճար մինչև 23 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած դիմորդները:

Ընդունելության քննությունները գնահատվում են 20 բալային համակարգով: Դրական են համարվում 8 և բարձր միավորները: Մինչև 8 միավորի դեպքում գնահատականը կլորացվում է, օրինակ՝ 7,5 միավորը հավասար է 8,0 միավորի: Ութից բարձր միավորները գնահատվում են տասնորդական մասի պահպանումով: Նպատակային տեղերի մրցույթն անց է կացվում առանձին՝ ՀՀ մարզպետարանների, համայնքների և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված դիմորդների միջև:

Դիմորդն իրավունք է ստանում մասնակցելու ընդունելության քննություններին բժշկական հանձնաժողովի եզրակացությունից հետո:

Դիմորդները հանձնում են քննություն՝ մասնագիտություն և ընդհանուր ֆիզիկական պատրաստություն առարկաներից:

Քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ և 1500 դրամ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննավարձից ազատվում են նպատակային տեղերի մրցույթի հավակնորդները, զոհված ազատամարտիկների և մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ զավակները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարած գումարը չի վերադարձվում: Աշխարհի, Եվրոպայի մրցանակակիրները (1-3-րդ տեղեր) և օլիմպիական խաղերում 1-6-րդ տեղ գրաված դիմորդները բուհ են ընդունվում առանց ընդունելության քննությունների):

Հավասար միավորներ հավաքելու դեպքում առավելությունը տրվում է՝

1. տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին.
2. «Մասնագիտություն» առարկայից բարձր միավոր ստացած դիմորդներին,
3. մարզական բարձր նվաճումներ և կոչումներ ունեցող դիմորդներին,

4. տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին,

Դիմումների հետ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) միջնակարգ կրթության ատեստատը (բնօրինակը),

բ) 6 լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

գ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, ծննդյան վկայական, մինչև 16 տարեկան երեխաների համար), զինվորական գրքույկ՝ զինծառայողների համար, ԿԳ բաժինների կողմից տրված 9-րդ ձև, փախստականի վկայական),

դ) զինվորական գրքույկ և տեղեկանք զինվորական կոմիսարիատից՝ ժամկետային զինվորական ծառայությունն անցնելու մասին,

ե) արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր զինծառայողների և ազատամարտիկների զոհվելու մասին,

զ) նպատակային տեղերի մրցույթին մասնակցելու համար՝ համապատասխան մարզպետարանի, համայնքի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից տրված ուղեգրի:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ինստիտուտ՝ հետևյալ հասցեով՝

Երևան, Ալեք Մանուկյան 11: Հեռախոս՝ 55-04-53